ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում **Երևան քաղաքի Ադոնցի փողոցի NN 4 և 4/3 հասցեներում** կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրների բնակարանների վիճակահանության վերաբերյալ

Հարգելի՛ մասնակից,

Սույնով տեղեկացվում եք, որ Դուք ընդգրկվել եք պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի NN 4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրների չխաղարկված թվով 7 բնակարանի վիճակահանությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակում՝ ծանուցման պահին Ձեր կողմից վճարված 400.000 ՀՀ դրամ կանխավճարը հետ վերադարձնելու համար դիմում չներկայացնելու հիմքով:

Վիճակահանությունը տեղի կունենա **2018 թվականի նոյեմբերի 17-ին, ժամը 10:00-ին** ՀՀ քաղաքաշինության կոմիտեում (ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 4-րդ հարկ):

Խնդրում ենք ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ տվյալ բնակարանների վիճակահանությանը մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **2018 թվականի նոյեմբերի 16-ը, ժամը 18:00-ն** ևս մեկ անգամ Ձեր անձնական տվյալները մուտք անել կառուցապատողի կողմից սպասարկվող կայքէջում: Տվյալները հաստատելուց հետո Ձեր էլեկտրոնային փոստին կուղարկվի նույնականացման համար (օգտանուն): Մուտք գործելուց հետո Ձեզ հանարավորություն կտրվի համակարգի ներկայացրած հասանելի բնակարանների ցանկից ընտրել բնակարաններ:

Ձեզ ենք ներկայացնում վիճակահանության ընթացքում խաղարկվող բնակարանների տվյալները.

- **Բնակարանի նախագծային համար՝ 164-տիպ՝ 19/1-հարկ՝ 3**
- **Բնակարանի նախագծային համար՝ 167-տիպ՝ 19/1-հարկ՝ 4**
- **Բնակարանի նախագծային համար ՝ 173-տիպ՝ 19/1-հարկ՝ 6**
- **Բնակարանի նախագծային համար ՝ 192-տիպ՝ 19/2-հարկ՝ 4**
- **Բնակարանի նախագծային համար ՝ 204-տիպ՝ 19/2-հարկ՝ 8**
- **Բնակարանի նախագծային համար ՝ 207-տիպ՝ 19/2-հարկ՝ 9**
- **Բնակարանի նախագծային համար ՝ 210-տիպ՝ 19/2-հարկ՝ 10**

Յուրաքանչյուր բնակարանի վիճակահանության ժամանակ հնչելու է տվյալ բնակարանի նախագծային համարը և տվյալ բնակարանի վիճակահանությանը

մասնակցող անձանց ազգանունը, անունը: Տվյալ բնակարանի խաղարկությանը ներկա չլինելու դեպքում վիճակահանությունը տեղի կունենա առանց Ձեր մասնակցության:

Վիճակահանությանը անհրաժեշտ է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով (անձնագիր/նույնականացման քարտ)**, իսկ լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորագրով**:

Հարգանքով՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե